# 02 Ճանապարհ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

47 (1446) • 13 դեկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am




## Հանդիպումներ ՀՀ ոստիկանությունում

Դեկտեմբերի 11-ին ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանն ընդունեց միջազգային փորձագետ Եկատերինա Զգուլաձեին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Մայքլ Շումանին, իրավապահ գործերով ավագ խորհրդատու Ադի Հոլովեյին, ծրագրի համակարգողներ Կարինե Քեշաբյանին եւ Մարիցա Հովհաննիսյանին:



Արման Սարգսյանը, ողջունելով հյուրերին, բարձր գնահատեց միջազգային փորձագետ Եկատերինա Զգուլաձեի՝ բարեփոխումներին ուղղված աշխատանքը եւ համագործակցության պատրաստակամություն հայտնեց:

Եկատերինա Զգուլաձեն շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ մի շարք հարցեր ուղղեց՝ ոստիկանության անձնակազմի պատրաստվածության, կրթվածության, սոցիալական վիճակի, ոստիկանության տեխնիկական հագեցվածության եւ այլ խնդիրների մասին:

Արման Սարգսյանը մանրակրկիտ ներկայացրեց ոստիկանությունում իրականացվող բարեփոխումները, խոսեց պարեկային ծառայության ստեղծման եւ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայությանը վերաբերող հարցերի մասին: խոսեց պարգեւավճարների հատկացման, շարժական պարեկային ծառայության ստեղծման եւ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայությանը վերաբերող հարցերի մասին:

Կողմերը քննարկեցին համագործակցությանը վերաբերող եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Նույն օրը նրանց ընդունեց ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանը:

Հանդիպման ընթացքում հյուրերին ներկայացվեցին ոստիկանության կառուցվածքն ու գործառույթները:

Քննարկվեցին ոստիկանության իրավաբանական, կադրային քաղաքականության եւ ֆինանսական վարչությունների աշխատանքի մասին հարցեր:

Հանդիպման ընթացքում ոստիկանության իրավասու պաշտոնյաները պատասխանեցին հյուրերին հետաքրքրող հարցերին, եւ համագործակցության ուղղությամբ ծավալվեց արդյունավետ քննարկում:

## Հանցավոր խումբ է հայտնաբերվել



Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 6-ը Երեւանում, Կոտայքի եւ Արմավիրի մարզերում հինգ ավազակային հարձակում էր կատարվել:

Բոլոր դեպքերով հարուցվել էին քրեական գործեր:

Առաջին դեպքն Արմավիրի մարզում էր:

Նոյեմբերի 30-ին դիմակավորված երկու անձ մտել էին Մյասնիկյան գյուղի մթերային խանութն ու ատրճանակի նմանվող առարկայով սպառնալով՝ փող պահանջել: Դրամարկղից հափշտակել էին փող, նոթբուք եւ երկու բջջային հեռախոս:

Դեկտեմբերի 1-ին դարձյալ երկու դիմակավոր մտել էին Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի շուրջօրյա գործող մթերային խանութ եւ հրազենի նման առարկայի սպառնալիքով փող ու բջջային հեռախոս հափշտակել:

Երկու օր անց ավազակային հարձակման մեկ այլ հաղորդում էլ ոստիկանության Մաշտոցի բաժնում գրանցվեց: Երկու դիմակավորված անձ մտել էին Դավիթաշենի հանրախանութներից մեկը, դանակի եւ ատրճանակի նման առարկայի սպառնալիքով դրամարկղից փող հափշտակել:

էջ 2

## Դանակահարություն դպրոցում



Դեկտեմբերի 10-ին, ժամը 13.15-ի սահմաններում, ոստիկանության Կենտրոնական բաժնում «Արամյանց» բժշկական կենտրոնից ահազանգ ստացվեց, որ կրծոսկրի եւ ազդրի վնասվածքներով բուժօգնության է դիմել 16-ամյա պատանի: Րոպեներ անց նա տեղափոխվել էր «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն, որտեղից եւս հնչել էր նույնաբովանդակ ահազանգ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզներն ու անչափահասների գործերով ծառայողները պարզեցին, որ դեպքը տեղի էր ունեցել թիվ 114 դպրոցում: 11-րդ դասարանցիների միջեւ ծագած վեճը հանգուցալուծվել էր մասնակիցներից մեկի դանակահարությամբ:

Նախապատրաստվում են նյութեր:

## Սպանության փորձը բացահայտվեց

Նոյեմբերի 14-ին Էջմիածնի Վազգեն Սարգսյան փողոցից հրազենային վնասվածքներով հիվանդանոց տեղափոխվեց 27-ամյա մի երիտասարդ: Դեպքի վայրում հայտնաբերվեցին կրակված պարկուճներ եւ տուժողի «Մերսեդես»-ը՝ կրակոցների հետքերով:



Հարուցվեց քրեական գործ: Վաղարշապատի բաժնի ծառայողների, ոստիկանության այլ ստորաբաժանումների գործընկերների եւ դեպքի նախաքննությունը վարող մարմնի աշխատակիցների հետ կատարված միջոցառումների ու քննչական գործողությունների արդյունքում պարզվեցին զինված միջադեպի մասնակիցների ինքնությունը, եւ որ սպանության փորձ կատարած անձինք եղել են «BMW» մակնիշի մեքենայով, որը շահագործել է Էջմիածնի բնակիչ, 25-ամյա մի երիտասարդ: Նա հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց:

Հայտնաբերվեց նաեւ «BMW»-ն: Օպերատիվ-հետախուզական տարաբնույթ միջոցառումներով հայտնի դարձավ, որ հրազենային վնասվածքներով «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից Երեւանի «Նաիրի» բժշկական կենտրոն տեղափոխված երիտասարդը հիվանդասենյակում հրազեն է պահում: Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները խուզարկությամբ հիվանդասենյակում հայտնաբերեցին ատրճանակ՝ լիցքավորված 9 մմ տրամաչափի 3 փամփուշտով, որոնցից մեկը՝ փողում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

## Ձերբակալվել են պաշտոնատար անձինք



Դեկտեմբերի 6-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության եւ ՊԵԿ ծառայողները Գոգավանի սահմանային անցակետում իրականացրել են համալիր օպերատիվ-քննչական միջոցառում, որի շրջանակներում գլխավոր վարչություն բերման են ենթարկվել ու ձերբակալվել մի խումբ պաշտոնատար անձինք:

ՊԵԿ քննչական վարչությունում քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով հարուցված քրեական գործի շրջանակներում փաստական տվյալներ էին ձեռք բերվել, որ ՊԵԿ մաքսային ծառայության Գոգավան-Պրիվոլնոյե մաքսային կետի մի խումբ պաշտոնատար անձինք թույլ են տվել ապօրինություններ. իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ են օգտագործել եւ 2019 թ. ընթացքում մի շարք անձանց կողմից արտերկրից Հայաստան ներկրված տարբեր ապրանքների նկատմամբ պատշաճ մաքսային հսկողություն չեն իրականացրել՝ պետության շահերին պատճառելով էական վնաս: Փաստական տվյալներ էին ձեռք բերվել, որ հիշյալ պաշտոնատար անձինք ապօրինի գործողություններ կատարելու դիմաց տարբեր անձանցից պարբերաբար ստացել են 200-ից 350 դոլար կաշառք:

Բերման ենթարկված անձանց բնակարանների ու ավտոմեքենաների խուզարկությամբ հայտնաբերվել են ապացուցողական նշանակության իրեր ու փաստաթղթեր: Նախաքննությունը շարունակվում է:

## Շորթել էր դասընկերուհուց



Ոստիկանության Աշտարակի բաժնի համայնքային ոստիկաններն ու անչափահասների գործերով ծառայողները օպերատիվ միջոցառումների արդյունքում շորթման վերաբերյալ տվյալներ էին ստացել: Արագածոտնի մարզում ապրող 17-ամյա մի աղջիկ դասընկերուհու կիսամերկ լուսանկարներն այլ անձանց ցույց տալու սպառնալիքով նրանից պահանջել ու մաս-մաս ստացել էր ընդհանուր 740 հազար դրամից ավելի գումար:

Աղջիկները հրավիրվեցին բաժին: Տուժողից հաղորդում ընդունվեց, իսկ մյուսը տվեց խոստովանական բացատրություն:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Կատարվում է քննություն:

### Յուրացումներ են բացահայտվել



*Առաքման ծառայության մատուցողը փոխանցման կտրոնները կեղծելով՝ յուրացրել էր ընկերության փողը:*

էջ 2

### Իսքնամաքրման գործընթացը շարունակվում է



*Պատիժը կրելուց հետո վերադարձել էր Հայաստան եւ շարունակել ծառայությունը ոստիկանությունում:*

էջ 3

### Միամիտների տիրակալը



*Գտնվելով դատապարտյալի կարգավիճակում՝ նոր դատավճիռ է նախապատրաստել իր համար:*

էջ 6

# Հանցավոր խումբ է հայտնաբերվել

Սկիզբը՝ էջ 1

Չորրորդ դեպքը դեկտեմբերի 5-ին Քանաքեռ-Զեյթունի վարչական տարածքում էր կատարվել: Երեք դիմակավորված անձ ատրճանակի նման առարկայի, դանակի եւ էլեկտրահարող սարքի սպառնալիքով բենզալցակայանից փող, համակարգիչ ու բջջային հեռախոսներ էին հափշտակել:



Վերջին դեպքը Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղում էր կատարվել: Դեկտեմբերի 6-ին երեք երիտասարդ մի թոշակառու կնոջ տուն էին մտել եւ զենքի սպառնալիքով հափշտակել ոսկյա իրեր, փող եւ թանկարժեք ժամացույց՝ պատճառելով մոտ 2 միլիոն դրամի նյութական վնաս:

Ավազակային հարձակում կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Բացահայտման գործում համագործակցում էին ոստիկանական տարբեր ստորաբաժանումներ:

Խանութներից երկուսի տեսախցիկ սարքերը ֆիքսել էին կասկածյալներին, բայց դիմակները թույլ չէին տալիս պարզելու նրանց ինքնությունը: Հարձակվողների կազմվածքը հուշում էր, որ հինգ ավազակային հարձակումներն էլ նույն հանցավոր խմբի գործն է:

Միջոցառումները շարունակվեցին, եւ վերջին դեպքից ժամեր անց ոստիկանության Կոտայքի բաժնում ստացված տեղեկություններով պարզ դարձան ոչ միայն կասկածյալների ինքնությունը, այլեւ գտնվելու վայրերը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ ավազակային հաձակումները հնարավոր է կատարած լինեն չորս երիտասարդներ, որոնցից մեկը՝ Երեւանի, երեքը Գյումրիի բնակիչներ էին:

Դեկտեմբերի 7-ին կասկածյալները հայտնաբերվեցին եւ բերման ենթարկվեցին ոստիկանության Կոտայքի բաժին:

Գյումրեցիները Գյումրի-Վանաձորի ճանապարհին էին բռնվել, իսկ Երեւանի բնակիչը՝ Մայակովսկի գյուղում, որտեղ նրա թոշակառու տատն էր ապրում, եւ ըստ նախնական վարկածի՝ հենց ինքն էլ ուղորդել էր ընկերներին հարձակվել տատի տան վրա:

Կասկածյալները ձերբակալվել են: Նրանց բնակարանների, մեքենաների եւ անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են ատրճանակ, դիմակ, դանակ, կռփազենք, ձեռնոցներ, բջջային հեռախոսներ, փող, ժամացույց, լուսանկարող սարք եւ այլ իրեր, որոնք չեն բացառվում, որ հափշտակված լինեն:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

# Ապօրինի թմրաշրջանառություն

Ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները դեկտեմբերի 3-ին, ապօրինի թմրամիջոց պատրաստելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով բերման են ենթարկել Գյումրու բնակիչ, 25-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող մանրացված չորացված զանգված՝ թղթով փաթեթավորված:



Նշանակվել է փորձաքննություն: Նախապատրաստվում են նյութեր:

Ազգային անվտանգության ծառայության եւ ոստիկանության փոխգործակցության արդյունքում դեկտեմբերի 5-ին բացահայտվեց ապօրինի թմրաշրջանառության դեպք: Օպերատիվ տվյալներն իրացվեցին ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության, ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության ու Մաշտոցի բաժնի ծառայողների համատեղ միջոցառմամբ:

Երեւանի Լենինգրադյան փողոցում հայտնաբերվեց եւ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման ենթարկվեց մայրաքաղաքի բնակիչ, 50-ամյա մի տղամարդ: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց հաշիշի նմանվող հեղուկ՝ 100 գրամից ավելի քաշով, եւ 78 գրամից ավելի հաշիշի նմանվող կիսաչոր զանգված: Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ հայտնաբերվածը նրան ուղարկվել էր արտերկրից:

Քրեական գործ է հարուցվել:

**Մ. Ս.**

# Յուրացումներ են բացահայտվել

Հանրապետությունում շատ են արագ սննդի պատրաստման կետերը, կան նաեւ առաքման ծառայություններ, եւ քաղաքացին այսօր կարող է պատվիրել սննդի առաքում ինչպես հեռախոսազանգով, այնպես էլ օնլայն՝ խնայելով ժամանակը: Ընկերություններն աշխատատեղեր են ստեղծում, իսկ որոշ առաքիչներ, պարզվում է, բարեխիղճ աշխատելու փոխարեն չարաշահումներ են թույլ տալիս:



Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մայրաքաղաքի սննդի առաքման ծառայություններից մեկում յուրացման դեպքեր էին եղել:

Առաջին հաղորդումը ոստիկանության Կենտրոնական բաժնում ստացվեց հոկտեմբերի 1-ին:

Սովորաբար առաքիչները աշխատանքային օրվա ավարտին սննդի վաճառքից ստացած հասույթը փոխանցում են ընկերության հաշվեհամարին, իսկ կտրոնը լուսանկարելով՝ հաշվապահին են ուղարկում: Սեպտեմբերի 4-ից 6-ը առաքման ծառայության մատուցողը, ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների, գումարի փոխանցման կտրոնները կեղծելով՝ ընկերությանը մոտ 200 հազար դրամի վնաս էր պատճառել:

Հարուցվեց քրեական գործ: Առաքիչը բաժին հրավիրվեց, տվեց խոստովանական բացատրություն:

Թվում էր՝ մյուսները պետք է հետեւություն անեին: Բայց օրեր անց նույն ընկերությունից նոր հաղորդում ստացվեց. հոկտեմբերի 17-ից 22-ը նշված եղանակով մեկ այլ առաքիչ ընկերությանը դարձյալ մոտ 200 հազար դրամի նյութական վնաս էր պատճառել: Մեկ ուրիշն էլ հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 11-ը, կեղծելով վճարային տերմինալի կտրոնները, 300 հազար դրամից ավելի գումար էր յուրացրել: Բանկի կողմից տրամադրած գրության ուսումնասիրությունը ցույց էր տալիս, որ ներկայացված անդորրագրերի տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Նոյեմբերի 16-ից 17-ը մեկ այլ առաքիչ էլ, ըստ նույն ընկերությունից ստացված հաղորդման, ոչ միայն գումար էր յուրացրել, այլեւ ընկերության կողմից տրամադրված պայուսակն ու բաճկոնը:

Նշված դեպքերով կասկածվողները հրավիրվել են ոստիկանություն եւ տվել բացատրություններ:

Քննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Դանակահարություններ Գյումրիում

Դեկտեմբերի 5-ին «Գյումրի» բժշկական կենտրոնից ոստիկանության Կումայրիի բաժին ահազանգեցին, որ կտրած-ծակած վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել Գյումրիի բնակիչ, 30-ամյա մի կին:



Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը թարմ հետքերով բացահայտեց հանցագործությունը՝ պարզելով, որ կինը դանակահարվել է իր տանը:

Կենցաղային հարցերի շուրջ վեճ էր տեղի ունեցել նրա եւ մի երիտասարդի միջեւ, որը հանգուցալուծվել էր կնոջ դանակահարությամբ:

Կումայրիի ոստիկանները Գյումրիի բնակիչ 29-ամյա երիտասարդի հետ բացատրական աշխատանք տարան, ինչի արդյունքում նա ներկայացավ բաժին:

Դեպքի հանգամանքները քննությամբ պարզվում են:

Նոյեմբերի 8-ին «շտապօգնության» կայանից ոստիկանության Մուշի բաժնում հաղորդում էր ստացվել, որ կոկորդի եւ ձախ զստային հատվածի կտրած-ծակած վերքերով բժշկական կենտրոն է տեղափոխվել Գյումրիի 34-ամյա մի բնակիչ: Նրան դանակահարել էին:

Գյումրիի քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ Գյումրիի Մովսես Խորենացու փողոցում ծագած վիճաբանության ժամանակ տուժողին դանակահարել է Տրդատ Ճարտարապետի փողոցի 28-ամյա մի բնակիչ:

Իրավապահների բացատրական աշխատանքի շնորհիվ նոյեմբերի 25-ին կասկածվողը ներկայացավ ոստիկանության Մուշի բաժին: Նա տվել է խոստովանական ցուցմունք:

Նախաքննությունը շարունակվում է:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# www.police.am

## Մարմնական վնասվածք էր պատճառել

Դեկտեմբերի 6-ին հիվանդանոցից ոստիկանության Ստեփանավանի բաժին հաղորդում էր ստացվել, որ մարմնական վնասվածքներով, ոչ սթափ վիճակում բուժօգնության է դիմել մի տղամարդ:

Մեկնած օպերատիվ խմբին տղամարդը հայտնեց, որ վնասվածքը ստացել է Լոռի Բերդ գյուղում: Փորձել էր հանդարտեցնել վիճաբանող անհայտ անձանց, ինչի ժամանակ որովայնի շրջանում զգացել էր սուր ցավ:

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում Լոռի Բերդ գյուղի փողոցի տներից մեկից բերման ենթարկվեց 35-ամյա մի քաղաքացի:

Նա խոստովանական բացատրություն է տվել, որ կեսգիշերին ոչ սթափ վիճակում, վիճաբանության ժամանակ, դանակով հարվածել է տղամարդու որովայնին:

Նախապատրաստվում են նյութեր:

## Հայտնաբերվել են ապօրինի հատված ծառեր

Դեկտեմբերի 5-ին ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, անհատ ձեռնարկատերի փայտամշակման արտադրամասում հայտնաբերել են մեծ քանակի ապօրինի փայտանյութ: Մասնավորապես հայտնաբերվել են տարբեր տեսակի սղոցներ, անկողահատ եւ կողահատ, տարբեր երկարության ու լայնության ընկուզենու, հաճարենու, սոսիի տախտակներ, վառելափայտ եւ սղոցման թափոն: Արտադրամասի դիմաց կայանված «ԳԱԶել»-ում հայտնեբերվել են տարբեր տեսակի ծառերի տախտակներ:

Արտադրամասի սեփականատերը հայտնաբերվածի օրինականության վերաբերյալ որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Հանգամանքները պարզվում են:

## Բնակարանագողը բռնվեց դեպքի վայրում

Դեկտեմբերի 4-ին ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները բերման ենթարկեցին Բերդ քաղաքի բնակիչ 50-ամյա մի տղամարդու: Օպերատիվ տվյալներ էին ստացել, որ նա մտել է համաքաղաքացու առանձնատուն՝ գողություն անելու: Կոտրել էր պատուհանը, մտել ներս, տակնուվրա արել իրերը, սակայն ոչինչ չէր հասցրել գողանալ. ոստիկանները բերման էին ենթարկել:

Քրեական գործ է հարուցվել:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Ինքնամաքրման գործընթացը շարունակվում է

***Ոստիկանությունը հետեւողական ու անհանդուրժող է ոչ միայն հանցավորության դեմ պայքարում, այլեւ սեփական շարքերը հանցավոր տարրերից մաքրելու գործընթացում: Հերթական փաստերն արձանագրվեցին օրերս:***



Ոստիկանության եւ ԱԱԾ փոխգործակցության արդյունքում փաստական տվյալներ էին ձեռք բերվել, որ մի քաղաքացու ապօրինի հրազենը օրինականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու եւ դրանց հիման վրա հրազենը գրանցելու դիմաց ոստիկանության Արմավիրի բաժնի թույլտվության համակարգի տեսուչը պահանջել է 55 հազար դրամ:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները կաշառքի առարկա 55 հազար դրամից 25 հազարը ստանալուց անմիջապես հետո ոստիկանության Արմավիրի բաժնի թույլտվության համակարգի տեսուչին բերման ենթարկեցին:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանությունում տվյալներ էին ստացվել ճանապարհային ոստիկանության գրանցման-հաշվառման եւ քննական Հյուսիսային կենտրոնի Գյումրիի ավագ տեսուչի ապօրինությունների վերաբերյալ: Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Գյումրիի մի բնակիչ Գյումրու մեկ այլ բնակչի միջնորդությամբ վարորդական իրավունքի տրամադրման համար նախատեսված գործնական քննությունը դրական ստանալու համար նոյեմբերի 24-ին որպես կաշառք փոխանցել է 50 հազար դրամ: Փողը փոխանցելուց հետո քաղաքացին մասնակցել է գործնական քննությանը, որն ընդունել է ճանապարհային ոստիկանության գրանցման-հաշվառման եւ քննական Հյուսիսային կենտրոնի վարորդական իրավունքի վկայականների հատկացման բաժանմունքի ավագ տեսուչը: Վերջինս, գործելով քննության եկած անձի օգտին, առանց նրա կողմից տրանսպորտային միջոց վարելու գործնական քննության սահմանված նորմատիվ վարժությունները կատարելու, քննությունը գնահատել է դրական, ինչի արդյունքում քաղաքացին ստացել է վարորդական իրավունքի վկայական: Ծառայողական քննության ընթացքում ձեռք են բերվել փաստական տվյալներ: Նախապատրաստված նյութերն ուղարկվել են հատուկ քննչական ծառայություն:

Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ոստիկանության ՊՊԳ վարչության անձի անվտանգության եւ գույքի պահպանության բաժնի ջոկի հրամանատարը, առանց ղեկավարությանը զեկուցելու, 2018 թ. մայիսին մեկնել է Մոսկվա: Այնտեղ կատարել է ՌԴ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված հանցագործություն՝ կաշառք տալը, ինչի համար Մոսկվայի Չերտանովսկիի շրջանի դատարանի վճռով դատապարտվել է 10 ամիս ազատազրկման: Պատիժը կրելուց հետո վերադարձել է Հայաստան եւ շարունակել ծառայությունը:

Պարզվել է նաեւ, որ ծառայողի անմիջական ղեկավար վաշտի հրամանատարը եւ ոստիկանության ՊՊԳՎ անձի անվտանգության եւ գույքի պահպանության բաժնի պետը, ծառայության նկատմամբ դրսեւորելով անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունք, տեւական ժամանակ չեն ստուգել ջոկի հրամանատարի ծառայությունը, չեն պարզել ու ոստիկանության ՊՊԳՎ ղեկավարությանը չեն զեկուցել նրա ծառայության չներկայանալու մասին:

Արդյունքում՝ ոստիկանության ՊՊԳՎ ջոկի հրամանատարը շուրջ 10 ամիս բացակայելով ծառայությունից՝ ստացել է 1 միլիոն 290 հազար դրամ աշխատավարձ: Ավելին՝ նրա աշխատանքի չներկայանալու հանգամանքը թաքցնելու նպատակով պաշտոնեական փաստաթղթերում մտցվել են ֆիզիկական պատրաստության ստուգարքին, ռազմամթերք ստանալու ու հրաձգության վարժություններին մասնակցության վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կապակցությամբ ՊՊԳՎ ջոկի հրամանատարը ազատվել է ոստիկանությունում ծառայությունից: Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում նախապատրաստված նյութերն ուղարկվել են հատուկ քննչական ծառայություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

# Գողություն եկեղեցուց



Հոկտեմբերի 31-ին ոստիկանության Ստեփանավանի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գողացել են Ստեփանավանի «Հայ ավետարանի հավատքի քրիստոնեաներ» եկեղեցու դահլիճում դրված սինթեզատորն ու դրա կարգավորիչը: Նախնական հաշվարկով՝ պատճառվել էր մոտ 900 հազար դրամի վնաս:

Քրեական գործ հարուցվեց: Նախաքննության ընթացքում Ստեփանավանի ոստիկանները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումներ, որոնք դեպքից մեկ ամիս անց արդյունք տվին:

Գողությունը կատարելու կասկածանքով ոստիկանության Ստեփանավանի բաժին բերման ենթարկվեցին 17, 19 եւ 20 տարեկան երիտասարդներ՝ երեքն էլ Ստեփանավանի բնակիչ: Նրանք ոստիկանությունից ներկայացվեցին դեպի նախաքննությունը վարող մարմնին:

Հետագա միջոցառումներով իրավապահները հայտնաբերեցին նաեւ գողացված սինթեզատորը:

Կատարվում է քննություն:

**Մ. Ս.**

# Գողություն խանութից



*Ոստիկանության Մալաթիայի բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ անհայտ անձինք տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Սեբաստիայի փողոցի շինանյութի խանութի դուռը, գողացել փող, համակարգիչներ, արհեստագործական գործիքներ:*

*Գողությունը կատարած անձանց եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեպքից մեկ օր անց քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Նուբարաշենի 11-րդ փողոցի 27-ամյա մի բնակիչ՝ 20-ամյա ընկերոջ հետ:*

*Նոյեմբերի 21-ին կասկածվողները բերման ենթարկվեցին ոստիկանության Մալաթիայի բաժին:*

*Հետագա միջոցառումներով պարզվելց, որ նույն օրը նուբարաշենցի 27-ամյա երիտասարդը Աջափնյակ վարչական տարածքում մեկ այլ շինանյութի խանութից փորձել էր գողություն անել, բայց գործն ավարտին հասցնել չէր կարողացել:*

*Նախապատրաստվում են նյութեր:*

# Մեքենան հրկիզողը հայտնաբերվեց



Աբովյան քաղաքի Երեւանյան փողոցի տներից մեկի բակում նոյեմբերի 17-ի գիշերը մեքենա էր այրվում: Օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգը ստանալով՝ ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողները նշված հասցե մեկնեցին: Հրշեջ ջոկատին հաջողվել էր մարել կրակը: Դեպքի վայրի զննությունը ցույց էր տալիս, որ բռնկման պատճառը մեքենայի անսարքությունը չէր. ինչ-որ մեկը դիտավորությամբ այրել էր վթարի ենթարկված «Տոյոտա»-ն, որը նորոգելու նպատակով տերն արհեստավորի տան մոտ էր թողել: Տնից հեռու չէր նաեւ մեքենաների նորոգման կետը:

Իրավապահները գիտեին, որ զգալի չափերի գույքային վնաս պատճառելու շարժառիթները կարող են բազմազան լինել՝ խուլիգանական դրդումներ, վրիժառություն, խանդ, նախանձ: Հարկավոր էր պարզել՝ հրկիզողի միջանձնային հարաբերություններն ում հետ կարող էին լարված լինել՝ մեքենայի տիրո՞ջ, թե՞ արհեստավորի:

Հետաքննություն իրականացնող մարմինը բացահայտման ուղղությամբ լայնածավալ միջոցառումներ ձեռնարկեց: Ստուգվեցին տարբեր վարկածներ: Ուսումնասիրվեցին հարակից տների եւ օբյեկտների մոտ տեղադրված տեսախցիկների տեսագրությունները: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին մեքենայի հրկիզումը, բայց կասկածվողի արտաքին տվյալների վերաբերյալ հնարավոր չէր հստակ պատկերացում կազմել:

Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողները: Եվ համատեղ աշխատանքն օրեր անց դրական արդյունք տվեց: Դեպքի վայրում ձեռք բերված տվյալների եւ ստացված տեղեկությունների համադրությամբ իրավապահները պարզեցին, որ «Տոյոտա»-ն հնարավոր է հրկիզած լիներ Աբովյան քաղաքի 45-ամյա մի բնակիչ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Կոտայքի բաժին:

Արհեստավորի հարեւանն էր, զբաղվում էր ավտոպահեստամասերի առուվաճառքով եւ, ըստ նախնական տվյալների, գործնական հարցերի շուրջ տարաձայնության արդյունքում էր գնացել այդ քայլին:

Հարուցվել է քրեական գործ:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Գողության դեպքեր են բացահայտվել



Նոյեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 1-ին ոստիկանության Շենգավիթի բաժնում մեքենայից կատարված գողության երկու դեպք գրանցվեց:

Առաջին դեպքը Սողոմոն Տարոնցու փողոցում էր կատարվել. տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին շենքերից մեկի մոտ կայանված «Վազ-2106» մակնիշի մեքենայի շարժիչի կափարիչը եւ բեռնախցիկը, հափշտակել արհեստագործական գործիքներ ու մարտկոց:

Մյուս գողությունը Արշակունյաց պողոտայի շենքերից մեկի բակում էր եղել: «Վազ-2104» մակնիշի մեքենայից մարտկոց էին գողացել:

Քրեական հետախույզների ձեռնարկած գործողությունների շնորհիվ տեղեկություններ ստացվեցին, որ գողությունները հնարավոր է կատարած լինի Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի 29-ամյա մի բնակիչ:

Դեկտեմբերի 2-ին կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Շենգավիթի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Գործատուն ու աշխատողները



Վանաձորցի Կարեն Մխիթարյանը ատրակցիոն խաղային ապարատներ էր տեղադրել, որը դարձել էր երեխաների սիրած վայրերից մեկը: Ծնողների հետ այցելում էին, ժամանակ անցկացնում, ուրախանում...

Ատրակցիոն ապարատները աշխատեցնելու, տիրություն անելու համար Կարենը օրավարձով աշխատանքի էր ընդունել համաքաղաքացիներ Վահրամ Մարգսյանին եւ Ալբերտ Գալոյանին:

Կարենը զգուշավոր գործատու էր: Աշխատողներին աչքաթող չէր անում: Մի օր, սակայն, նկատեց, որ ինչ-որ բան այն չէ: Եկամուտը սրտով չէր: Սկսեց կասկածել Վահրամին եւ Ալբերտին: Վստահ չէր, բայց կասկածը գնալով խորանում էր: Այս հարցի շուրջ էլ գործատուի եւ աշխատողների միջեւ վիճաբանություն տեղի ունեցավ:

Վահրամը եւ Ալբերտը փորձում էին ցրել Կարենի կասկածները: Վերջինս, սակայն, նրանց չէր հավատում: Ի վերջո, վեճը վերածվեց ծեծկռտուքի, որի ընթացքում Կարենը խփեց աշխատակիցներին: Նրանք դիմեցին փախուստի, սակայն Կարենը հետապնդելով՝ բռնեց Վահրամին ու բռունցքով խփեց: Ընկերոջը օգնության հասավ Ալբերտը ու պատասխան հարվածը հասցրեց Կարենին: Նույն պահին էլ նկատվեցին տարածքում ծառայություն կատարող ոստիկանների կողմից:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվեցին դատաբժշկական փորձաքննություններ, որոնց եզրակացությունների համաձայն՝ Վահրամին պատճառվել էր միջին ծանրության վնաս, իսկ Ալբերտի վնասվածքները թեթեւ վնասի հատկանիշներ չէին պարունակում:

Դիմողները, սակայն, բողոքը չեն պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

# Ապօրինի զենք-զինամթերքի հանձնում



*Ոստիկանության ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ տարածքային մի շարք ստորաբաժանումներում արձանագրվել են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպքեր:*

*Դեկտեմբերի 2-ին ոստիկանության Արաբկիրի բաժին եկած 29-ամյա երիտասարդը, որը մայրաքաղաքի բնակիչ է, կամավոր հանձնեց պայթուցիչքով ոռնակ՝ հայտնելով, որ գտել է գյուղի առանձնատունը նորոգելիս:*

*Դեկտեմբերի 2-ին ապօրինի զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպք արձանագրվեց Իջեւանի բաժնում: Ակնաղբյուր գյուղի 35-ամյա մի բնակիչ բաժին էր բերել գործարանային համարով հրացան՝ հայտնելով, որ այն պատկանել է հանգուցյալ պապին:*

*Ոստիկանության Ամասիայի բաժին եկած 28-ամյա երիտասարդն էլ, որը Մեղրաշատ գյուղի բնակիչ է, կամավոր հանձնեց 5.45 մմ տրամաչափի փամփուշտներ կրակող ինքնաշեն ատրճանակ ու փամփուշտներ: Երիտասարդի հայտնածով՝ դրանք պատկանել են հանգուցյալ պապին:*

*Նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ:*

*Հիշեցնենք, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից:*

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Զվարճալի ամփոփագիր

### Քեռու տղան

Ոստիկանություն զանգած կինը ներկայացել էր Ալիսա: Նա հայտնել էր, որ քեռու տղային ակումբում փող եւ ոսկեղեն է տվել՝ գործ սկսելու համար, իսկ նա դուռը փակել է իր վրա, լույսերը անջատել է եւ ասել, թե իրեն ոչինչ չունի տալու, մեկ ժամից պետք է ազատի տարածքը, հակառակ դեպքում վիզը կկտրի:



Ոստիկանության ծառայողները նշված վայրից բաժին են հրավիրել 36-ամյա Վարդուհուն եւ 23-ամյա մի աղջկա: Պարզվել է, որ ահազանգող Ալիսան հենց Վարդուհին է: Նա հաղորդում է տվել, որ հեռախոսազրույցի ժամանակ մորեղբոր 34-ամյա որդին իր հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ:

Ի թիվս այլ հանգամանքների՝ պարզվում է նաեւ, թե Վարդուհին ինչու է Ալիսա:

### Կողմնորոշվեց

Նոյեմբերի 24-ին մի գյուղացի ոստիկանության բաժին դիմում էր ներկայացրել, թե գիշերն իր գոմի դուռը բաց է եղել, խոշոր եղջերավոր անասունը պոկել է կապը, դուրս եկել գոմից եւ կորել:

Երկու օր անց, երբ սեփական ուժերով փնտրտուքն արդյունք չի տվել, գյուղացին նույն բաժնում արդեն հաղորդում է տվել, թե իր անասունը գողացել են:

### Հազարդոլարանոց դիպլոմ

Հանրապետության հեռավոր մարզերից մեկում 24-ամյա մի աղջիկ դիմել է ոստիկանությունում ծառայության ընդունվելու համար, սակայն փաստաթղթերի ստուգման ընթացքում պարզվել է, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը նրա անվամբ շրջանավարտ չի ունեցել, դիպլոմը կեղծ է:

Նյութերի նախապատրաստման ընթացքում աղջիկը խոստովանել է, որ դիպլոմը ձեռք է բերել հազար դոլարով:

Հանգամանքները պարզվում են:

### Ոչխարների դիտավորյալ թունավորում

36-ամյա մի գյուղացի իրենց տարածքը սպասարկող ոստիկանության բաժնի պետին հասցեագրված դիմումով հայտնել է, թե վերջին երեք օրերին իր ոչխարներն արածեցրել է տնից մեկ կիլոմետր հեռավորության վրա, որտեղ ոչխարները կերել են ճակնդեղի թփեր եւ սատկել: Ոստիկանների հետ զրույցում նա կարծիք է հայտնել, որ ճակնդեղի արտի տերն է թփերի վրա թույն դրել, ինչի պատճառով էլ սատկել են իր հինգ ոչխարները:

### Անդրշիրիմյան խողովակներ

73-ամյա մի տղամարդուց ոստիկանություն դիմում է ստացվել, որ 37-ամյա Աշոտը ապամոնտաժելու միջոցով գողացել է իրենց ընտանիքին պատկանող գերեզմանոցի մետաղյա խողովակները:

Հաջորդ օրը Աշոտն է բացատրություն տվել, որ խողովակները պատկանել են իրենց ընտանիքին:

Հանգստություն հանգուցյալների ոսկորներին:

# Ի՞նչ է քրեական լրատվությունը

Սկիզբը՝ նախորդ համարում

Սպանությունների պարբերական դիտումից մարդու հոգեվիճակը խանգարվում է, հատկապես երբ առկա են համապատասխան նախադրյալներ: Ոլորտի որոշ մասնագետներ գտնում են, որ հարվածի տակ է ոչ միայն հեռուստադիտողի, այլեւ այն լրագրողների հոգեվիճակը, որոնք անընդհատ շփվում են հանցագործների եւ տուժած քաղաքացիների հետ: Պարբերական շփումները հետք են թողնում մտածելակերպի, աշխարհընկալման վրա, կորչում է հավատն առ մարդը:

Այն լրագրողները, որոնք մեկ-երկու տարի աշխատել են քրեական լրատվության ոլորտում, հետագայում այլ թեմաներով հրապարակումներ չեն անում, քանի որ նման նյութերում պակասում է սենսացիոն տեղեկատվությունը:

Ի տարբերություն սովետական ժամանակաշրջանի՝ այսօր հեռուստաընկերությունները բազմաթիվ են, եւ քրեական դեպքերին անդրադառնում են գրեթե բոլորը՝ փոքր-ինչ տարբեր մեկնաբանություններով: Հեռուստատեսությունը գերհագեցած է նման ինֆորմացիայով: Այստեղ խնդիրը պետք է այլ լինի: Հեռուստադիտողը հակված է ստանալ հրատապ ինֆորմացիա: Սակայն այն պետք է լինի հստակ եւ փաստերով ստուգված, մատուցման լեզուն լինի պարզ, առանց խառնիճաղանջ բառերի ու մտքերի հստակ ձեւակերպմամբ: Որքան պարզ՝ այնքան մատչելի եւ ընդունելի: Նյութը պետք է այնպես մատուցել, որ հեռուստադիտողին հետաքրքրի: Պակաս կարեւոր գործոն չէ լրագրողի արհեստավարժությունը: Չպետք է չարաշահել այն հնարավորությունը, որ տրվում է լրագրողին: Միայն այս դեպքում հաջողությունը հիմնված կլինի արդարամտության վրա:




Լրագրողի աշխատանքում հաջորդ կարեւոր գործոնը, ինչն առանձնացնում են մասնագետները, փաստերն են: Որքան շատ տեղեկություն՝ այնքան լավ: Տեղեկատվական նյութի գլխավոր բանալին մանրամասներն են: Ամեն օր կատարվում են տարբեր հանցագործություններ: Ոչ բոլորի մասին է, բնականաբար, տեղեկացվում հասարակությանը: Դրանց մասին ավելի հստակ եւ կոնկրետ ներկայացնում են իրավապահ համակարգի պաշտոնական կայքէջերը:

Հնչողություն ունեցող հանցագործություններին անդրադառնում են գրեթե բոլոր զանգվածային լրատվամիջոցները, ոմանք՝ ավելի օպերատիվ, քան մյուսները: Ոմանք նյութը մատուցում են վելուծական ժանրով, մյուսները հարազատ են մնում՝ «որտեղ, երբ» տարբերակին:

Ցանկացած քրեական հանցագործություն լուսաբանելիս լրագրողը պարտավոր է աշխատել իրավապահների հետ: Նման դեպքում տերմինաբանությունը շատ կարեւոր է: Քրեական թեմաներով գրող լրագրողը պետք է քիչ թե շատ գաղափար ունենա Քրեական օրենսգրքից, կարողանա տարբերակել գոնե ամենատարածված հանցատեսակները:

Լրագրողն իր գործունեությամբ չպետք է խանգարի ընթացող քննությանը, նա ընդամենը պետք է ներկայացնի դեպքն այնպես, ինչպես տեղի է ունեցել, եւ՝ առանց եզրակացությունների: Միակողմանի լուսաբանումը նշանակում է ընթերցողին կամ հեռուստադիտողին զրկել ճշմարիտ տեղեկատվությունից: Լրագրողը նյութը ներկայացնելիս պետք է նշի աղբյուրը՝ դրանով հնարավորություն տալով իր լսարանին անել ճիշտ եզրահանգումներ, գնահատականներ տալ:

Հաճախ ինֆորմացիոն աղբյուրը ցանկանում է մնալ անանուն: Այստեղ նույնպես կարեւոր է լրագրողի արհեստավարժությունը, անկողմնակալությունը: Եթե լրագրողը չպետք է բացահայտի իր աղբյուրը, պիտի կարողանա այնպես ներկաացնել ձեռքի տակ եղած ինֆորմացիան, որ կասկած չառաջանա իր խոսքերի հավաստիության հանդեպ:

Մի այլ կարեւոր խորհուրդ եւս. չպետք է հանցագործին հերոս ներկայացնել: Միշտ չէ, որ սենսացիան լավ է եւ ակտուալ: Հանցագործությունն ինքնին բացասական երեւույթ է, եւ պետք չէ այն առավել սեւ գույներով ներկայացնել հասարակությանը սարսափեցնելու համար:

Քրեական լրատվության գլխավոր առանցքը, բնականաբար, տուժողն է: Եթե լրագրողին հաջողվել է զրուցել նրա հետ, ապա պետք է հարգալից լինել, տուժողը պետք է հասկանա, որ իրավիճակը դիմացինին հասկանալի է:

Որոշ հանցատեսակներ այնքան սարսափելի են, որ դրանք լուսաբանելիս հնարավոր չէ չանցնել որոշակի սահմաններ: Նման դեպքերում ճիշտ կլինի, որ լրագրողը հաշվի առնի տարածաշրջանի առանձնահատկությունները եւ հասարակական պահանջը:

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 5 -ից 12-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 39 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, ծեծի եւ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 2-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի եւ խուլիգանության, 1-ը՝ կողոպուտի, 4-ը՝ գողության, 5-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու եւ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու, 1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ սուտ մատնության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 80 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 117-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 21 դեպք. 3 մարդ զոհվել է, 19-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

## Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 9-ին Երեւանի Գր. Լուսավորչի փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-322132» եւ «ԲՄՎ» մակնիշի մեքենաներ. «ԲՄՎ»-ի 19-ամյա վարորդը եւ 20-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին «ԳԱԶել» մակնիշի մեքենայի վարորդը Երեւանի Բագրատունյաց փողոցում վրաերթի էր ենթարկել 60-65 տարեկան անձը չպարզված տղամարդու, որը տեղում մահացել է:

■

Դեկտեմբերի 9-ին Երեւանի Շոպրոնի փողոցում իրար են բախվել «Նիսան» եւ «Օպել» մակնիշի մեքենաներ. «Օպել»-ի 55-ամյա վարորդը, 38 եւ 8 տարեկան երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղում իրար են բախվել «Օպել Զաֆիրա», «ԲՄՎ» եւ «ՎԱԶ-21099» մակնիշի մեքենաներ. «ՎԱԶ-21099»-ի 17-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին Մասիս քաղաքի Երեւանյան եւ Հանրապետության փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Ինֆինիտի» եւ «ՎԱԶ-21214» մակնիշի մեքենաներ. «ՎԱԶ-21214»-ի 29-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիկ-Ջոլաքար գյուղերի ճանապարհին իրար են բախվել «Հոնդա» եւ «ՎԱԶ-211440» մակնիշի մեքենաներ. «ՎԱԶ-211440»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին «Օպել» մակնիշի մեքենայի վարորդը Նոյեմբերյան համայնքի Երեւանյան փողոցում վրաերթի է ենթարկել 19-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 9-ին Երեւանի Արմենակյան եւ Սարալանջի փողոցների խաչմերուկում անհայտ վարորդն իր վարած «Տոյոտա»-ով վրաերթի է ենթարկել հետիոտնի: Ձեռնարկվում են միջոցառումներ տուժողի եւ ավտոմեքենայի վարորդի ինքնությունը պարզելու ուղղությամբ:

■

Դեկտեմբերի 10-ին Երեւանի Օրբելու եւ Կիեւյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Տոյոտա» մակնիշի մեքենաներ. «Տոյոտա»-ի վարորդը եւ 71-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին Երեւանի Գայի պողոտայում իրար են բախվել «Մազդա» եւ «Մերսեդես» մակնիշի մեքենաներ. «Մերսեդես»-ի 38-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 61-րդ կմ-ին իրար են բախվել «Ռենո» եւ երկու «Ֆորդ» մակնիշի մեքենաներ. «Ֆորդ»-երից մեկի 35-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «Չերի Տիգո» մակնիշի մեքենայի վարորդը Տաշիրի Երեւանյան փողոցում վրաերթի է ենթարկել 63-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին Երեւան-Սեւան ճանապարհի 15-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի մեքենաներ. «Օպել»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 10-ին «Լեքսուս» մակնիշի մեքենայի վարորդը Երեւան-Սեւան ճանապարհի 15-րդ կմ-ին՝ «Բալի» ռեստորանային համալիրի մոտ, վրաերթի է ենթարկել 22-ամյա քաղաքացուհու, որը տեղում մահացել է:

■

Դեկտեմբերի 11-ին «Սուզուկի» մակնիշի մեքենան Կապան քաղաքի Շինարարների փողոցում դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել այգու դարպասի երկաթյա սյանը. 18-ամյա ուղեւորը տեղում մահացել է:

# Անչափահաս հանցագործներ

***Պատանի հանցագործները հաճախ դաժանությամբ չեն զիջում փորձառու քրեականներին: Մարդիկ միշտ վախեցել են ոչ միայն այս վերջիններից, այլեւ անչափահասներից, որոնք, ասենք, բակի տաղավարում նստած կամ կողքից անցնելիս չար ու սեւեռուն նայում են իրենց: Որոշ մասնագետներ այն կարծիքին են, որ անչափահասների հանցավորությունը քիչ է տարբերվում մեծահասակների հանցավորությունից: Իսկ որոշ դեպքերում անչափահասներն այնպիսի արարքներ են կատարում, որ չափահասների մտքով անգամ չէր անցնի. ծաղրուծանակի են ենթարկում համադասարանցիներին, ծեծում են պատահական անցորդի, հանդուգն կողոպուտներ կատարում եւ այլն:***

***Անչափահասների հանցավորության դրսեւորումները հատուկ են հետխորհրդային տարածքի բոլոր պետություններին: Այս առումով վիճակը մեզանում, թերեւս, շատ ավելի բարվոք է, քան, ասենք, Ռուսաստանի Դաշնությունում, սակայն նկատի ունենալով, մասնավորապես, տեղեկատվական դաշտի ազատականացման հետեւանքով հակահասարակական բարքերի ներթափանցման հնարավորությունը, անհրաժեշտ է մշտապես հսկողության տակ պահել այս բավական փխրուն ու խոցելի ոլորտը, ինչը եւ անում են ոստիկանության համապատասխան ծառայությունները՝ համագործակցելով դպրոցի եւ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:***



### Դպրոցական նստարանից՝ մեղադրյալի աթոռին

Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկ քաղաքի Հոկտեմբերյան շրջանի իրավապահները վնասազերծեցին անչափահաս շորթիչների մի խումբ, որը բաղկացած էր հինգ-վեց հոգուց: Նրանք հասակակիցների նկատմամբ ոտնձգություններ կատարում էին սովորաբար երկու-երեք հոգով, մանր-մունր բաներ էին շորթում, սակայն երբեմն կատարում էին նաեւ խոշոր հանցագործություններ: Օրինակ, ծանոթներից մեկի տնից վերցրել էին մուտքի դռան բանալին ու հետագայում կողոպտել բնակարանը:

Պատանի մաֆիոզները նաեւ մշտական զոհ ունեին՝ շրջանի դպրոցներից մեկի աշակերտ Պավել Բելովը: Ամիսներ շարունակ հետապնդում էին նրան: Սկզբում անչափահասը ստիպված փող էր բերում տնից, իսկ հետո, երբ «հաշիվը» մեծացրին, ու նա չկարողացավ փող տալ, ստիպված վճարեց մոր թանկարժեք մուշտակով: Եվ միայն այդ ժամանակ տղան ամեն ինչ պատմեց ծնողներին, ու նրանք դիմեցին ոստիկանություն:

### Օրը ցերեկով

Հինգ հոգուց կազմված անչափահասների մի խումբ (միայն մեկն էր քսան տարեկան) տասից ավելի հանցագործություն էր կատարել Սվերդլովսկի մարզում՝ գողություններ, կողոպուտներ, ավազակային հարձակումներ: Օրինակ, հանցախմբի անդամները մի անգամ, օրը ցերեկով, ավտոբուսի կանգառում երթուղայինի սպասող մի աղջկանից խլել էին հեռախոսը: Պարզվեց, որ խմբի անդամները նորմալ, «բարեհաջող» ընտանիքներից էին: Նրանք դատապարտվեցին պայմանական պատժաչափերի:

Բայց սա մանկական խաղ էր այն ամենի համեմատությամբ, ինչ արել էին Ուստ Իլիմի պատանի ավազակները՝ ավտոմեքենաների առեւանգումներ, գողություններ, ավազակային հարձակումներ (ընդհանուր առմամբ՝ 17 հանցադրվագ): Իսկ տուժող կանանցից մեկին, ով դժբախտաբար բնակարանի դուռը բացել էր նրանց առաջ, այնպես էին ծեծել, որ գլխի վնասվածքների պատճառով չէր կարողացել մասնակցել քննչական փորձարարությանը:

### «Անհատ» ավտոառեւանգիչը

Սվերդլովսկի մարզի 17-ամյա բնակիչ Տիմոֆեյ Սոլովյովը ընդամենը երկու ամսում տասնմեկ ավտոմեքենա էր առեւանգել: Մեքենաների մի մասը, «ավտոզբոսանքներից» հետո, պարզապես թողել էր փողոցում, մյուսները ապամոնտաժել ու մասերը վաճառել էր: Սակայն հանցավոր ճանապարհով վաստակած գումարները երկար ժամանակ վայելել չհաջողվեց:

### Սպանեցին ընկերուհուն

2007 թվականի օգոստոսի լույս 6-ի գիշերը տուն չվերադարձավ Իրկուտսկի 19-ամյա բնակչուհի Եկատերինա Վեշնիկովան: Զանգելով դստեր բջջային հեռախոսին՝ մայրը պարզեց, որ այն անջատված է, չնայած ընդամենը մեկ ժամ առաջ աղջիկն ինքն էր զանգել մորն ու ասել, որ գնում է ընկերների հետ զբոսնելու: Առավոտյան տագնապահար մայրն այցելեց աղջկա բոլոր ծանոթներին: Եղավ նաեւ 17-ամյա Յուրի Կրոտովի ու տարիքով ավելի մեծ Նիկոլայ Ռոմանյուկի տներում: Նրանք տեղյակ չէին, թե որտեղ է Եկատերինան: Իսկ երբ որոշ ժամանակ անց մայրը կրկին փորձեց հանդիպել նրանց, պարզվեց, որ մեկնել են Բայկալ: Զույգը ձերբակալվեց արշավից վերադառնալուն պես...

Աղջկա դիակը բանվորները հայտնաբերեցին Ալեքսանդրյան մայրուղու հարակից աղբանոցում: Դեմքը վնասվածքներից ու ջարդվածքներից սեւացած էր, այլակերպված, սակայն մայրը ճանաչեց դստերը...

Անառարկելի ապացույցների ճնշման տակ Յուրի Կրոտովը շուտով սկսեց ցուցմունք տալ եւ ներկայացրեց հրեշավոր հանցագործության մանրամասները:

Սպանությունը կատարվել էր քաղաքի շինություններից մեկում, որտեղ սովորաբար հավաքվում էր տեղի երիտասարդությունը: Կրոտովն ու Ռոմանյուկը, ականատեսների վկայությամբ, առավոտից հարբած էին:

Հանդիպելով Կատյա Վեշնիկովային՝ առաջարկել էին ժամանակ անցկացնել ծանոթ զվարճավայրում: Աղջիկն առանց որեւէ կասկածի ու մտավախության ընդունել էր վաղեմի ծանոթների առաջարկը: Ժամը 22.00-ի սահմաններում նրա ու այդ զույգի միջեւ վեճ էր ծագել: Կրոտովն ու Ռոմանյուկը սկսել էին ծեծել աղջկան...

Կրոտովը պատմեց, որ Կատյան, հասկանալով, որ բանը միայն ծեծով չի ավարտվի, փորձել էր դուրս պրծնել, գոռացել էր, օգնության կանչել, սակայն շրջակայքի բնակիչներից ոչ մեկը օգնության չէր եկել ու չէր զանգել միլիցիա:

Աղջիկն, ի վերջո, թուլացել էր, դադարեցրել դիմադրությունը, բայց պատանի սրիկաները հասկանում էին, որ անպատիժ չեն մնա: Անհանգիստ էր հատկապես Կրոտովը, որը 17 տարեկանում արդեն դատվածություն ուներ գողությունների համար:

Առանց երկար-բարակ մտածելու, նրանք խեղդել էին աղջկան, դիակը դրել հեռուստացույցի տուփի մեջ ու նետել աղբարկղը: Մինչ այդ վերցրել էին նրա բջջային հեռախոսը, մատանին ու ականջօղերը:

### Դեռահաս քիլերներ

Իրկուտսկցի մի թմրամոլ, Չերենկով ազգանունով, որոշել էր վաճառել բնակարանը: Ի դժբախտություն իրեն՝ դիմել էր համաքաղաքացի, նախկինում դատված Նաումովիչին, որն անշարժ գույքի առուվաճառքով էր զբաղվում: Նաումովիչը նրան տարել էր Ույան գյուղ՝ այդ «ուղեւորությունը» պատճառաբանելով նրանով, թե Չերենկովին պաշտպանում է իր մրցակիցների հնարավոր ոտնձգություններից:

Նաումովիչը բնակարանը հաջողությամբ վաճառեց, բայց չէր շտապում գումարը տալ Չերենկովին ու որոշեց ազատվել նրանից: Այդ հարցը լուծելու խնդրանքով դիմեց նախկին միլիցիոներ Շչեգլովին, որը Ույանի պատանիներից ընտրեց Միրոնովին ու Կոլոբովին: Երկուսն էլ 17 տարեկան էին, նախկինում ենթարկվել էին քրեական պատասխանատվության: Համապատասխան վճարի դիմաց (ըստ վկաների ցուցմունքի՝ 70-150 հազար ռուբլի) նրանք համաձայնեցին կատարել պատվերը:

Գյուղի ակումբում հանդիպելով Չերենկովին՝ Միրոնովն ու Կոլոբովը սպասել էին մինչեւ նա կհարբի, տուն հասցնելու պատրվակով տեղավորել էին մոտոցիկլետի սայլակում ու հասցրել գյուղի ծայրը: Այնտեղ դանակով հարվածել էին թմրամոլի որովայնին, իսկ ածելու շեղբով կտրել կոկորդը:

Մարդասպաններին բավական արագ գտան: Միրոնովը, որն այդ ժամանակ հատել էր չափահասության շեմը, դատապարտվեց տասնհինգ, Կոլոբովը՝ ինը տարի հինգ ամիս ազատազրկման:

# Միամիսների տիրակալը



Նվարդ Մելիքյանը փորձառու խարդախ է: Հիսունհինգ տարեկան է, բարձրագույն կրթությամբ, խարդախության համար նախկինում երկու անգամ դատապարտված: Այդպիսին է նրա համառոտ, բայց խոսուն կենսագրությունը, որին նոր էջ ավելացրեց:

Սեղադրական եզրակացությունը կարդալիս կարելի է ապշել. Նվարդ Մելիքյանի որոգայթն ընկածներնին հիմնականում անելանելիությունը չի ուղղորդել, անճարակությունից չէ, որ նրա ցանցն են ընկել: Նրանց ծուլությունն է առաջնորդել, որոշակի դժվարությունների հետ կապված հարցերը զարտուղի ճանապարհով, օրենքը շրջանցելով լուծելու պատրաստակամությունը: Կամովի են իրենց խնդիրների լուծումը հանձնել խարդախին, խնդրել են, որ զբաղվի իրենց հարցերով, բարեհաջող ավարտի դեպքում էլ «մաղարիչ» են խոստացել: Իսկ երբ Նվարդ Մելիքյանը հանձն է առել խնդրի լուծումը, գոհ ու թեթեւացած սպասել են... մինչեւ խաբված լինելը հասկանալու պահը:

Նվարդ Մելիքյանը միամիտներին կողոպտելու համար ինչ դերերով ասես չի ներկայացել՝ փաստաբան, հարկային տեսուչ, գործարար... Զավեշտալին այն է, որ խարդախության որոշ գործեր ձեռնարկելիս դեռեւս դատվածությունը մարված չի եղել: Փաստորեն, գտնվելով դատապարտյալի կարգավիճակում՝ նոր դատավճիռ է նախապատրաստել իր համար:

Անդրադառնալով Նվարդ Մելիքյանի ընդամենը մեկ խարդախությանը՝ պարզապես ընդգծենք բազմիցս ասվածը՝ ոչ մի բացատրական, կանխարգելիչ աշխատանք արդյունք չի տա, եթե խաբվողն ինքը գիտակցություն չդրսեւորի՝ չվստահել ամենազոր ներկայացող անծանոթին՝ որքան էլ պերճախոս լինի, որքան էլ սարեր խոստանա: Հակառակ դեպքում՝ հետեւանքն անհամեմատ ծանր է, քան սեփական հարցերն անձամբ, օրինական ճանապարհով լուծելիս առաջացող ժամանակավոր դժվարությունները:

Իրենց բնակարանային հարցի լուծումը Նվարդ Մելիքյանին էին վստահել մոսկվայաբնակ ամուսիններ Ռիտա եւ Գուրգեն Հակոբյանները՝ այդ նպատակով նրան տալով երեք հազար դոլար՝ նախնական ծախսերի համար: «Օդի մեջ» բնակարանի համար, իբր բանկից քսանհինգ հազար դոլար վարկ ձեւակերպելու նպատակով, օրեր անց Նվարդը եւս հինգ հարյուր դոլար է պահանջում: Մեկ շաբաթ անց զանգում է Մոսկվա եւ երկու հարյուր դոլար էլ ինչ-որ տեղեկանքների համար ուզում:

«Մասնագիտական» հոտառությամբ զգալով, որ կարող է մի վերջին անգամ էլ կողոպտել դյուրահավատ ամուսիններին՝ երեք հարյուր դոլար է ուզում «նիստն առաջ գցելու» համար: Ամուսինները ուղարկում են երեք հարյուր դոլարն ու... սպասում:

Սպասում են այնքան, մինչեւ պատահաբար իմանում են, որ Նվարդ Մելիքյանին Երեւանում «դատում են ինչ-որ խարդախության համար»:

Գուրգեն Հակոբյանն անմիջապես գալիս է Երեւան ու հասկանում, որ փողերը «ավերակներին է հանձնել»...

Նվարդ Մելիքյանի «գործունեությունն» առայժմ դադարեցվել է: Իսկ մյուս միամիտներին, որ չհասցրին հայտնվել նրա ցանցում, թերեւս տիրություն կանեն ուրիշ նվարդներ: Նրանք շատ են, որովհետեւ նրանց ջրաղացին ջուր լցնողներ միշտ էլ կան:

**Համիկ ՊՈԴՈՍՅԱՆ**

# «Գիշերաշրջիկները»




***Ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից իրականացվող գիշերային շրջագայությունները կանխարգելիչ միջոցառումների տեսանկյունից, որպես կանոն, արդյունավետ են: Արդյունավետ էր նաեւ ոստիկանության պարեկապահակետային ծառայության եւ Կենտրոնական բաժնի աշխատակիցների համատեղ գիշերային շրջայցը:***

Չարենցի եւ Սայաթ-Նովայի փողոցների խաչմերուկում ոստիկանների տեսադաշտում հայտնված երիտասարդը կասկածելի թվաց: Ընդհանրապես, այդ կարգի մարդիկ ոստիկան տեսնելիս ակամա իրենց մատնելու յուրօրինակ պահվածք են դրսեւորում: Նման դեպքերի համար ասում են՝ գող՝ սիրտը դող: Գիշերային շրջայցի դուրս եկած ոստիկանների տեսադաշտում հայտնվածը գող չէր. թմրանյութ պահող եւ օգտագործող էր:

Իր անձնական մեքենայով հանդերձ՝ ոստիկանությունում «հյուրընկալվածը» Նոր Նորքի 7-րդ զանգվածի բնակիչ Հովսեփ Հակոբյանն էր: Անձնական խուզարկությամբ նրա տաբատի գրպանից հայտնաբերվեցին փայլաթիթեղով փաթաթված, սուր հոտով դարչնագույն գնդիկներ, իսկ մեքենայի զննությամբ՝ պահախցից հայտնաբերվեց ծխախոտի տուփի մեջ լցված նմանատիպ քառասուն գնդիկ:

Հովսեփ Հակոբյանը խոստովանեց, որ հայտնաբերվածը հաշիշ է, ժամեր առաջ գնել էր իր օգտագործման համար: Ումի՞ց էր գնել՝ չէր հիշում. շատերից է թմրանյութ գնում, նաեւ՝ օտարերկրացիներից:

Կեսգիշերին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզների տեսադաշտում հայտնված «գիշերաշրջիկներից» մեկը թմրանյութ օգտագործող էր, մյուսը՝ իրացնող:

Թմրամոլը քսանչորսամյա Գեւորգ Սիմոնյանն էր, իրացնողը՝ Դավիթաշեն թաղամասի բնակիչ, ոստիկանության հետ «շփումներում» բազմափորձ Վաղարշակ Մնացականյանը: «Գործարքից» վայրկյաններ անց ոստիկանները նրանց բռնեցին:

Ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզներին կեսգիշերին «հանդիպած» թմրամոլները տասնիննամյա Արման Արշակյանն ու քսաներկուամյա Արտակ Հովհաննիսյանն էին: Անձնական խուզարկությամբ նրանց մոտից հայտնաբերված պոլիէթիլենային տոպրակներում մարիխուանա էր, որ մինչ թմրամիջոց դառնալը՝ որպես կանեփ աճել էր Արման Արշակյանի հայրենի գյուղի հանդերում: Արմանը հավաքել, չորացրել ու թմրամիջոց էր դարձրել վայրաճ բույսը: Մենակ չէր օգտագործում. հորաքրոջ տղայի՝ Արտակ Հովհաննիսյանի հետ էր կիսում «հաճույքը»:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի աշխատակիցների տեսադաշտում հայտնված երիտասարդը Մայիսի 9-ի փողոցի բնակիչ Արմեն Մանուկյանն էր: Ներարկիչի մեջ լցրած դեզոմորֆինը նա թաքցրել էր գուլպայի մեջ: Չէր պատկերացնում, որ այդ տարաժամին իրենց փողոցում ոստիկանության ծառայողների կհանդիպեր: Հանդիպեց ու... խառնվեց իրար: Բայց ուշ էր:

Բոլոր դեպքերով քննություն է կատարվում:

# Դեղատան տնօրենը ձերբակալվել է



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները նոյեմբերի 18-ին Հալաբյան եւ Արզումանյան փողոցների խաչմերուկից, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին երեւանի բնակիչ, 44-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց հոգեներգործուն դեղապատիճ:

Հետագա միջոցառումներով փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ բերման ենթարկվածը դեղապատիճը գնել էր Աջափնյակ վարչական շրջանի դեղատներից մեկից: Դեղատան խուզարկությամբ հայտնաբերվեց 56 հոգեներգործուն դեղապատիճ: Դեղատան տնօրենը բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ նա հոգեներգործուն դեղապատիճները ձեռք էր բերել Երեւանի 44-ամյա մի բնակչից, որը եւս հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց:

Հարուցվել է քրեական գործ:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Գրպանահատներ են բերման ենթարկվել

Դեկտեմբերի 4-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի աշխատակիցների եւ տարածքային բաժինների ծառայողների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ գրպանահատության երկու դեպք բացահայտվեց:

Առաջին հաղորդումը ոստիկանության Կենտրոնական բաժնում ստացվել էր օպերատիվ կառավարման կենտրոնից՝ նոյեմբերի 30-ին, ժամը 13-ի սահմաններում. թիվ 46 երթուղու ավտոբուսում ուղեւորուհու պայուսակից գողացել էին դրամապանակը, որի մեջ եղել էր փող, նույնականացման եւ բանկային քարտեր:

Բաժնի քրեական հետախույզները ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայ-



քարի բաժանմունքի ծառայողների հետ համատեղ միջոցառումներով տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Սարի թաղի 41-ամյա մի բնակիչ: Դեկտեմբերի 4-ին կասկածվողը բերման ենթարկվեց եւ տվեց խոստովանական բացատրություն:

Գողոնը մասամբ հայտնաբերվել է:

Մյուս դեպքը դեկտեմբերի 4-ին, ժամը 17-ի սահմաններում, էր կատարվել: Տիգրան Մեծի պողոտայում մի կնոջ պայուսակից դրամապանակ էին գողացել, որի մեջ եղել էր փող, նույնականացման, բանկային, ու կուտակային քարտեր:

Ոստիկանները Տիգրան Մեծի պողոտայից, նշված գողությունը կատարելու կասկածանքով, ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկեցին Դրոյի փողոցի 43-ամյա մի բնակչի:

Նա տվել է խոստովանական բացատրություն: Գողոնը հայտնաբերվել է:

Դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

# Գողացողը կին էր



Նոյեմբերի 17-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ հարմարեցված բանալիով բացել են Թումանյան փողոցի բնակարաններից մեկի դուռը, գողացել չհրկիզվող պահարան, որի մեջ կային ոսկյա զարդեր եւ փող:

Հանցագործության բացահայտման ուղղությամբ քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Բաշինջաղյան փողոցի 36-ամյա մի բնակչուհի:

Նոյեմբերի 18-ի առավոտյան, բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, նա բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին եւ խոստովանեց կատարածը:

Հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Ընկերություն»



Քառասունհինգամյա Սուրեն Ավագյանի եւ քսանութամյա Արման Զաքարյանի ընկերության առանցքը կողոպուտն ու գողություններն էին: Անհրաժեշտ գործողություններ նրանց պարագայում, որովհետեւ, այսպես ասած` թմրանյութային եւ խաղատնային վայրերը էժան հաճույք չէին, ու ոչ մի տեղ չաշխատող երկու տղամարդկանց համար հասանելի էին գողանալու եւ կողոպտելու միջոցով:

Մայրաքաղաքի այն թաղամասը, որտեղ ապրում եւ իրենց «տեր ու տիրական» էին զգում, փոքր տարածք էր «գողական» կյանք վարող ընկերների համար եւ պարբերաբար, թմրանյութով գոտեպնդված, քաղաքամեջ էին իջնում...

Մինչեւ ոստիկանների կողմից հայտնաբերվելն այսպիսին էր Սուրենի եւ Արմանի կյանքի ընթացքը: հախուռն կյանքի մասին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում օպերատիվ տեղեկություններ ստացվելուց հետո նրանց ձերբակալելու համար գործողությունների ծրագիր մշակվեց:

Քրեական հետախուզության աշխատակիցներին միացան նաեւ պարեկապահակետային ծառայության ոստիկանները: Եվ ահա, նոյեմբերի 20-ին Ազատության պողոտայի եւ Ներսիսյան փողոցի խաչմերուկում, զույգի` թմրանյութ գնելու պահին, օպերատիվ խումբը սկսեց միջոցառումը:

Ոստիկանների օպերատիվ եւ ճշգրիտ գերծողությունները անակնկալի բերեցին Սուրեն Ավագյանին եւ Արման Զաքարյանին: Անձնական խուզարկությամբ նրանց մոտից հայտնաբերվեցին թմրանյութով լցված ներարկիչներ եւ փայլաթղթի մեջ փաթեթավորված ափիոնի չափաբաժիններ:

Որքան էլ իրենց «գողական» պահեին, ոստիկանությունում պիտի խոստովանական ցուցմունք տային թմրանյութի «սկզբնաղբյուրի» մասին:

Պարզվեց, որ թմրանյութի մատակարարը ոմն Էդո էր:

Շարունակելով օպերատիվ գործողությունները` ժամեր անց ոստիկանները Քոչարի եւ Գյուլբենկյան փողոցների խաչմերուկից բերման ենթարկեցին նախկինում երեք անգամ դատապարտված Արամ Նահապետյանին եւ նախկինում չորս անգամ դատապարտված Վրեժ Գրիգորյանին:

Թմրանյութ հայտնաբերվեց միայն Արամ Նահապետյանի մոտ, եւ նա ոստիկանության բաժնում միացավ Սուրեն Ավագյանին եւ Արման Զաքարյանին: Պարզվեց, որ այս մի դեպքում էլ թմրանյութի մատակարարը նույն Էդոն էր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվեց եւ ոստիկանություն բերման ենթարկվեց նաեւ Էդոն` Էդուարդ Մնոյանը:

Թմրանյութի իրացմամբ զբաղվող Էդուարդ Մնոյանին ընկերակցում էր հերթական գնորդը` Գուրգեն Առաքելյանը: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց Էդուարդից քիչ առաջ գնած ափիոնն ու քացախաթթվի անհիդրիդը:

Անձնական խուզարկությամբ Էդուարդ Մնոյանի մոտից հայտնաբերվածը մեծաքանակ էր` պոլիէթիլենային փաթեթներով ափիոնի եւ մարիխուանայի չափաբաժիններ, քացախաթթվի անհիդրիդով ներարկիչներ, հոգեմետ դեղահաբեր:

Փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Դեկտեմբերի 8-ին հաղորդվել էր 38-ամյա Լիլիթ Կ.-ի կողմից 32-ամյա Վիգեն Պ.-ի եւ նրա կնոջ հասցեին սպանության սպառնալիքներ հնչեցնելու եւ նրանց բնակարանի անձեռնմխելիության խախտման փորձի մասին:

Ոստիկանության Մաշտոցի բաժնի համայնքային ոստիկանները պարզել են, որ Լիլիթ Կ.-ն Կենտրոնական բաժնի կողմից սեպտեմբերի 9-ից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ՔՀԳՎ եւ Արմավիրի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 7-ին Արմավիր քաղաքի Արարատյան փողոցից Արմավիրի բաժին բերման է ենթարկվել 31-ամյա Կարեն Ա.-ն, որը Սիսիանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արաբկիրի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 8-ին Երեւանի Կիեւյան փողոցից բերման է ենթարկվել 48-ամյա Արթուր Կ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 258 հոդվածի (Խուլիգանությունը) մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 6-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալները իրացնելով` Բայրոնի փողոցի բնակարաններից մակում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել նույն փողոցի 56-ամյա մի բնակչուհու, որը ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզվում էր խուլիգանության եւ ծեծի մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 6-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզները Երեւան-Բուխարեստ չվերթի հաշվառումից հետո բաժին բերման են ենթարկել Վրաստանի 43-ամյա մի քաղաքացու, որը 2013 թ. հուլիսից հետախուզվում էր Թուրքիայի Ինտերպոլի կողմից գողության, բնակելի շինության անձեռնամխելիության խախտման եւ գույքային վնաս պատճառելու մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 6-ին Լոռու մարզի Նովոսելցովո գյուղից հայտնաբերվել եւ բաժին է բերման ենթարկվել Եղվարդ քաղաքի 30-ամյա մի բնակիչ, որը 2018 թ. հունիսից հետախուզվում էր ոստիկանության Կոտայքի բաժնի կողմից գողության մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 6-ին ոստիկանության ՔՀԳՎ-ից ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով` Սեւանի բաժնի ծառայողները Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղում հայտնաբերել եւ Վարդենիսի բաժին բերման են ենթարկել Լճաշեն գյուղի 32-ամյա մի բնակչի, որը ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու եւ ծեծի մեղադրանքով:

◆

Դեկտեմբերի 6-ին Բագրատաշենի անցակետից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Արցախի 27-ամյա մի բնակիչ: Նա 2015 թ. ապրիլից ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

# Հարված` ինչով պատահի



Հանցագործությունը գլուխ է բարձրացնում հատկապես երբ խախտվում են համակեցության կանոնները, երբ ոտնահարվում են բարեկրթության նորմերը, երբ արհամարհվում է հասարակական կարգուկանոնին ենթարկվելու պարտականությունը:

Բազմիցս ենք գրել այդ մասին, բազմիցս ենք ներկայացրել դեպքեր, երբ սովորական կենցաղային վեճերը ողբերգական ավարտ են ունեցել: Մեքենան կայանելու հարցի շուրջ վեճը Մասիսում ավարտվեց դանակահարությամբ: Իսկ Նոր Նորքի զանգվածի մի բնակիչ ընդհանուր մուտքը մաքրելու հարցի շուրջ վեճն ամփոփեց հարեւանին դանակահարելով:

Դեպքերը շատ են: Իսկ մենք հրապարակել ու հրապարակելու ենք` հնչեցնելով հարցը` ինչո՞ւ: Ու նաեւ պատասխանը` այդպես չի լինի, եթե բարեկրթությունը վարքականոն դարձնենք անձնային ու հասարակական հարաբերություններում:

Նոյեմբերի 30-ին հիվանդանոցից ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում ստացվեց, որ գանգոսկրի ներհրված կոտրվածքով իրենց մոտ է տեղափոխվել հիսունվեցամյա Լեւոն Մինասյանը:

Հիվանդանոց մեկնած քրեական հետախուզության աշխատակիցներին տղամարդը հայտնեց, որ վնասվածքը ստացել էր ընկնելու հետեւանքով, ինչը, սակայն, հավատ չներշնչեց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանները պարզեցին իրողությունը:

Գյուղամիջում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Լեւոն Մինասյանի գլխին գազի բալոնով հարվածել էր համագյուղացի Գառնիկ Սեդրակյանը: Նա բերման ենթարկվեց ոստիկանություն եւ խոստովանեց արարքը:

Առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու փաստով հարուցվել է քրեական գործ:

Հ. Պ.

# Բացահայտում են Արաբկիրի ոստիկանները



Դեկտեմբերի 2-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում ստացվեց, որ Գյուլբենկյան փողոցի հագուստի խանութից փորձել են գողություն անել:

Դեպքի վայր մեկնած քրեական հետախույզները թարմ հետքերով պարզեցին ոչ միայն գողության փորձն անողի ինքնությունը, այլեւ գտնվելու վայրը:

Դեկտեմբերի 3-ին Արաբկիրի քրեական հետախույզները վարչական շրջանը սպասարկող պարեկայինների հետ Գյուլբենկյան եւ Ավետիսյան փողոցների խաչմերուկից կասկածվողին բերման ենթարկեցին: Նա խոստովանական ցուցմունք է տվել:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ ձեռք բերվեցին նաեւ, որ բերման ենթարկվածը գողություններ է արել Կիեւյան փողոցի մի սրճարանից, Փափազյան փողոցի մի խանութից եւ այլ հաստատություններից: Քրեական գործ է հարուցվել: Գողոնը մասամբ հայտնաբերվել է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

# Գողություն արագ սննդի կետից



Հյուսիսային պողոտայում գործող արագ սննդի կետերից մեկի տեսախցիկը ֆիքսել էր, թե ինչպես նոյեմբերի լույս 30-ի գիշերը դեմքը քողարկած մի երիտասարդ երկաթե ձողով բացում է հաստատության դուռն ու դրամարկղը հափշտակում:

Առավոտյան կատարվածի վերաբերյալ ոստիկանության Կենտրոնական բաժնում ահազանգ ստացվեց: Քրեական հետախույզներն սկսեցին օպերատիվ միջոցառումների իրականացնել: Մի քանի ժամ տեւած հետեւողական աշխատանքի արդյունքում հայտնի դարձավ գողությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը:

Քսանամյա երիտասարդը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին ու տվեց խոստովանական բացատրություն: Հայտնաբերվեց նաեւ գողոնը:

Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Պաբլո ... (թավջութակ)
Ավստրալ. կաքնասուն
Զագրեբի գետը
Վեսքգորթերի արքա, որը գրավեց Հռոմը
Մոլորակ
Կինոմրցանակ
Բուի
Ճապոն. ֆիզիկոս, Նոբելյան դափ.
Խորհրդ. պետ. գործիչ
Քաղաք, Ֆրանսիա
13-րդ դ. պարսիկ բանաստեղծ
Ֆրանս. քանդակագործ
Թելատու բույս
Տիտղոս
Հայազգի ռուս. իշխան, գեներալ
Մաշկի հիվանդություն
Մաղադանոս
Մարզագույք
Կտորի նեղ շերտ
Հսկիչ
Հռենոսի վտակ
Նապոլեոնի պաշտոն. նկարիչը
Ճայ
Պաշտամունք
Նավահանգիստ, Խորվաթիա
Զկներ
Կետորսի զենք
Ծանուցում
Հարթ
Նինվեի անվանադիրը
Էստոնացի բեմադրիչ
Հայ թագավոր
Մարմար
«... Գրեյի դիմանկարը»
Անցյալի հագուստ
Սպարտակ ...
... Սալվադոր
Չին. փիլ. հասկացութ.
Խոհանոցային սարք
Բիլբաոյի բնակիչ
... Կրոյֆ
Համաստեղություն
Ալեքսեյ ...
Փպասան
Խոզի, տավարի ...
Խորհրդ. զինագործ
Հայ կին գրող
Միաբջիջ կենդանի
... Վերդե
Կայարանի հարթակ
Սամսոնի սիրուհին
Նետերի տուփ
«Ֆեդրա», «Անդրոմաքե»
Սպարտացի հողագործ
«Տերյանական» եղանակ
Բելգ. ջութակահար
Նիկողայոս ...
Աթլետիկ. մրցաձեւ
Պաղլեղ
Մեսիա
Նարդի
Ցավազրկող դեղ
Դիպուկահար
Նահանգ ԱՄՆ
Փոքրիկ կացարան
Լարավոր նվագարան
Վրաց. երգ
Օպտիկ. գեներատոր
Դա, նա
Ծաղկեփունջ կազմելու արվեստ
... Բաժբեուկ-Մելիքյան
Վառ, թեժ
«...եր Շեռլոկ Հոլմսի մասին»
Մկրտչյան, Կիկաբիձե
Ոչխար
Կախյալ ավատատեր
Միրգ
Կովկասյան հին ցեղ
Ամերիկ. տափաստան
Խուսքի մաս
Մերձբալթ. երկրի դրամ
Գամփռ
Ազգ..., հայր...
Ճապոն. երգահան
Օվկիանոսի «արքա»
... ու պատարագ
Աֆրիկ. հին ժողովուրդ
«Ավրորա»
Մարիո ...
Իտալ. քաղաք
Ասիական անապատ
Հում կաթի սեր
Գետ, Յադուրթիա
Հայ արվեստ. խմբակցութ. (Փարիզ)
Օհան ..., Իսահակյան
Պատմական մատնիչ
Ակորդեոն
14-18-րդ դդ. պետություն, Բիրմա

## Ուշադրություն

### Հարգելի քաղաքացինե՛ր



ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

## Աստղագուշակ

13.12 - 19.12



**Խոյ** - Շատ բան կախված է այն բանից, թե ինչպես կարծագանքեք հանգամանքների փոփոխությանը:

**Ցուլ** - Կյանքի բոլոր ոլորտներում հնարավոր են փոփոխություններ դեպի լավը:

**Երկվորյակ** - Շաբաթը լարված եւ բարդ է, բայց այն չի կարելի անհուսալիորեն վատը համարել:

**Խեցգետին** - Հաջողությամբ կհաղթահարեք բավական բարդ փորձություններ:

**Առյուծ** - Ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում, հուզումների եւ անհանգստության առիթներ կունենաք:

**Կույս** - Բարենպաստ շաբաթ է սպասվում: Լավ է հատկապես պատասխանատու աշխատանքի համար:

**Կշեռք** - Փորձությունները կհաղթահարեք հաջորդեն իրար, եւ նույնիսկ հաղթանակ տանելով՝ չեք կարող հանգստանալ:

**Կարիճ** - Շաբաթը նպաստավոր է: Լարված պահերին անգամ ձեզ չեք կորցնի եւ կփոխեք իրավիճակը դեպի լավը:

**Աղեղնավոր** - Կբողոքեք հոգնածությունից, բայց հոգու խորքում կուրախանաք, որ պետք եք ե՛ւ որպես մասնագետ, ե՛ւ որպես մարդ:

**Այծեղջյուր** - Հնարավորություն կունենաք հաջողության հասնել շատ գործերում:

**Ջրհոս** - Գործնական հրաբերությունները կարող են ընդունել ռոմանտիկ կամ ընկերական բնույթ:

**Ձուկ** - Մի հետաձգեք նոր գաղափարների ու ծրագրերի իրականացումը: Ուշադիր լսեք ինտուիցիայի հրահանգներին:

## Փորձեք լուծել

### Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

### Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.d8-b6 a7:c5 2.d6:h2x

Խնդիր N2 1.g5-h6 a7:c5 2.e5-d6 c5:g5 3.h6:b4x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

## Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աքաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.12.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: